Գ-42

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐՈՒԺԱՆ ԳԵՂԱՄԻ ԳԵՂԱՄՅԱՆ

ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ Ի. ԻՆՈՆՅՈՒԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1938-1950 ԹԹ.)

Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Մեծարգոյն հարգանքով՝ իմ ուսուցչին,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Ա. Սաֆրաստյանին

ԵՐԵՎԱՆ 2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՌԴ Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆ. Վ.Վ. Բոչարով

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Խառատյան
բ.գ.թ., դոցենտ Ռ. Հ. Մելքոնյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թ. հուլիսի 20-ին, ժամը 11:00 -ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. հունիսի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար՝ **պ.գ.թ. Գ. Ա. Մարգարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը

Թուրքիայի Հանրապետության պատմաքաղաքական զարգացման կարևորագույն գործոններից մեկը ավտորիտար իշխանության և խարիզմատիկ առաջնորդության առկայությունն է: Այս գործոնների առաջացման և զարգացման պատճառները ուղղակիորեն կապված են Թուրքիայի սոցիալ-մշակութային դինամիկայի հետ. ավտորիտար իշխանությունը և խարիզմատիկ առաջնորդությունը նպաստում էին թուրքական ավանդական հասարակության համերաշխմանը (solidarization) հանրապետության արդիականացման պայմաններում: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ հանրապետական Թուրքիան ձևավորվել էր ավտորիտար արդիականացման արդյունքում, որի ընթացքում ժամանակակից պետություն ստեղծելու համար փոխառվել էր բարեփոխումների արևմտյան մոդելը: Քեմալական ռազմական-բյուրոկրատական վերնախավի՝ այս մոդելով իրականացրած լայնածավալ փոփոխությունների արդյունքում Թուրքիայի հասարակությունը զրկվեց համերաշխման հիմնական ձևերից, որոնք հիմնված էին այսպես կոչված «ավանդույթի իշխանության վրա»: Այդ պատճառով քեմալական քաղաքական վերնախավը գիտակցաբար կիրառում էր հասարակության համախմբման այնպիսի մեխանիզմներ, որոնք հանդիսանում էին «ավանդույթի իշխանության» սիմուլյակրներ: Ստեղծված սոցիալ-մշակութային և հատկապես քաղաքական համակարգի պահպանման և զարգացման համար կարևորագույն նշանակություն ուներ «խարիզմատիկ առաջնորդության» սիմուլյակրը, որը երբեմն ձևավորում էր քաղաքական առաջնորդի անձի պաշտամունք: Այս սիմուլյակրը պարբերաբար կիրառվել է Թուրքիայի իշխող վերնախավի կողմից հանրապետության պատմության ողջ ընթացքում:

Մինչդեռ ժամանակակից պատմագիտության մեջ Թուրքիայում խարիզմատիկ առաջնորդության ու անձի պաշտամունքի առաջացման պատճառները կապվում են քաղաքական գործիչների անձնային հատկանիշների և տիրապետող գաղափարախոսությունների հետ: Սակայն թուրքական օրինակի պատմահամեմատական դիտարկումը այլ արևելյան քաղաքական համակարգերի համատեքստում ցույց է տալիս, որ «խարիզմատիկ առաջնորդությունը» մշտապես առկա է թուրքական քաղաքական համակարգում՝ հանդիսանալով սոցիալ-մշակութային դինամիկայի կարևորագույն բաղադրիչ:

Վերոնշյալ հանգամանքներից ելնելով՝ արդիական ու հրատապ է դառնում հասկանալ, թե որոնք են խարիզմատիկ առաջնորդության և անձի պաշտամունքի ձևավորման պատճառները և մեխանիզմները Թուրքիայում: Դա պարզելու համար նպատակահարմար է դիտարկել Թուրքիայի երկրորդ նախագահ Իսմեթ Ինոնյուի (1938-1950թթ.) կառավարման շրջանը, քանի որ այն հնարավորություն է ընձեռում համակողմանիորեն ներկայացնել Թուրքիայի հիմնադիր նախագահ Մ. Քեմալ Աթաթյուրքից (1923-1938թթ.) հետո

խարիզմատիկ առաջնորդության գործառույթի նշանակությունն ու շարունակականությունը: Այս նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել Ինոնյուի նախագահության օրոք Թուրքայի սոցիալ-մշակութային դինամիկան: Ինոնյուի արձաններն ու կիսանդրիները, նրան պատկերող պաստառներն ու նկարները, նրան նվիրված գեղարվեստական գրականությունը, տոներն ու մարզական միջոցառումները, մեկ բառով՝ այն ամենը, ինչ կոչվում է «պաշտամունքի արտադրանք», չէր հայտնվել *ex nihilo*: Դրանք ստեղծվում էին հստակ մարդկանց և հաստատությունների կողմից՝ որոշակի գործողությունների արդյունքում: Կարելի է կարծել, որ այդ գործողությունները կամ, այլ խոսքով, «պաշտամունքի արտադրությունն ու արտադրանքը» ենթարկվում են պատմական վերակառուցման:

Պատմագրության մեջ բացակայում են թուրքական քաղաքական գործիչների շուրջ անձի պաշտամունքի ձևավորման պատմա-մարդաբանական համալիր հետազոտություններ: Առավել ևս, բացակայում են Ի. Ինոնյուի անձի պաշտամունքն ուսումնասիրող համապարփակ աշխատանքներ, ինչը սույն ատենախոսությունը դարձնում է արդիական պատմագիտության տեսանկյունից:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակն է՝ ուսումնասիրել խարիզմատիկ առաջնորդության մեխանիզմի հիմնական դերը՝ որպես Արևելքի արդիականացվող ավանդական հասարակության սոցիալ-մշակութային դինամիկայի առանցքային գործոն:

Ատենախոսության թեմայի ուսումնասիրությունը խնդիր ունի.

- Բացահայտել Թուրքիայի Հանրապետությունում արդիականացման գործընթացների բնույթը և զարգացման առանձնահատկությունները:
- Ուսումնասիրել «օսմանյան ժառանգության» ազդեցությունը հանրապետական Թուրքիայում արդիականացման գործընթացների վրա:
- Պարզաբանել այն հիմնական գործոնները, որոնք ազդում էին Թուրքիայի ավանդական հասարակության սոցիալ-մշակութային դինամիկայի վրա:
- Ներկայացնել ավանդական հասարակությունում խարիզմատիկ առաջնորդության ձևավորման հիմքերը:
- Լուսաբանել Ի. Ինոնյուի կյանքի և գործունեության հիմնական փուլերը:
- Մանրամասն վերլուծել Ի. Ինոնյուի անձի շուրջ ձևավորված պաշտամունքի կառուցարկման քաղաքականությունը և կառուցարկման հիմնական ուղիներն ու դրսևորումները:

Ատենախոսության գիտական նորույթը

- Ատենախոսության մեջ ցույց է տրվել, որ Թուրքիայի սոցիալ-մշակութային դինամիկայի հիմքը արդիականացման պայմաններում

«ավանդույթի իշխանությունն է», որի առանցքային գործոնը խարիզմատիկ առաջնորդությունն է:

- Ինոնյուի անձի պաշտամունքի ստեղծումը Թուրքիայում պայմանավորված էր արդիականացման պայմաններում ավանդական հասարակության արժեքային համակարգի քայքայմամբ և հասարակական համերշխման անհրաժեշտությամբ, և այդ պատճառով կախված չէր միայն քաղաքական գործչի անհատական հատկանիշներից:
- Թուրքական հասարակությունում առաջնորդի խարիզման կառուցարկվում էր՝ օգտագործելով թե՛ ավանդական հասարակությանը ծանոթ կերպարներ և խորհրդանիշներ, թե՛ արևմտյան քաղաքական մշակույթից փոխառված նշանային համակարգ:
- Քեմալականների կողմից իրականացված արդիականացումը չի փոփոխել թուրքական հասարակության մեջ գոյություն ունեցող սոցիալ-մշակութային կապերը:
- Ատենախոսության մեջ օգտագործվել են իրենց ձևով ու բովանդակությամբ ամենատարբեր աղբյուրներ, որոնք առաջին անգամ են մտցվում գիտական շրջանառության մեջ:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակները

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է Ի. Ինոնյուի նախագահության տարիները՝ 1938թ. նոյեմբերի 11-ից մինչև 1950թ. մայիսի 22-ը: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ժամանակագրական ստորին և վերին շեմերը պայմանական են: Ինոնյուի նախագահության շրջանի սոցիալ-մշակութային դինամիկան հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել թուրքական հասարակության արդիականացման նախընթաց փուլերը: Այդ պատճառով նպատակահարմար է մեկ ենթագլխով ներկայացնել արդիականացման գործընթացի առանձնահատկությունները Օսմանյան կայսրության վերջին փուլում և Թուրքիայի Հանրապետության առաջին շրջանում, ինչպես նաև դիտարկել Ի. Ինոնյուի դերն ու հասարակական կերպարը մինչ նախագահ ընտրվելը:

Ատենախոսության մեթոդաբանական հենքը

Աշխատանքի հիմքում ընկած են տարատեսակ աղբյուրների և գրականության պատմաքննական և պատմավերլուծական մեթոդները: Քանի որ ատենախոսության թեման ենթադրում է համալիր մոտեցում, ուսումնասիրությունը կատարվել է մի քանի գիտակարգերի հատման տիրույթում: Մասնավորապես, օգտագործվել են նաև պատմական մարդաբանության, վիզուալ մարդաբանության, իմագոլոգիայի, սոցիոլոգիայի, մշակութաբանության, էթնոսոցիոլոգիայի, գրականագիտության տրամադրած վերլուծական գործիքակազմերը:

Սոցիալ-մշակութային դինամիկան ուսումնասիրելու ընթացքում հեղինակը գերազանցապես հիմնվել է ռուս պատմաբան, մարդաբան Վ.Վ. Բոչարովի մարդաբանական տեսության վրա: Այս տեսության հիմքում ընկած է այն գաղափարը, որ արդիականացման ընթացքում Արևելքի ավանդական

հասարակության քայքայումը անխուսափելիորեն հանգեցնում է քաղաքական վերնախավի կողմից այդ հասարակության «պարտադրված համերաշխման», որն իրականացվում է «ավանդույթի իշխանության» սիմուլյակրերի կիրառման միջոցով:[1]

Հետազոտական որոշ խնդիրների լուծման համար ատենախոսության մեջ օգտագործվել են նաև Է. Հոբսբաումի, Մ. Ֆուկոյի, Յ. Հայզինգայի, Ս. Ռոյի մշակած տեսությունները:

Ատենախոսության կիրառական նշանակությունը

Ատենախոսությունը կարող է կիրառական նշանակություն ունենալ Թուրքիայի Հանրապետության պատմության, Ասիայի և Աֆրիկայի նորագույն պատմության, քաղաքական պաշտամունքների պատմության վերաբերյալ հետագա պատմագիտական և քաղաքագիտական հետազոտությունների համար: Դրանց հիման վրա կարող են կազմվել նոր արևելագիտական գիտա-մեթոդական և ուսումնական ձեռնարկներ: Ատենախոսության մեջ արված եզրակացությունները կարող են հիմք դառնալ նոր՝ համեմատական ուսումնասիրությունների համար, որոնք դիտարկում են այն արևելյան սոցիալ-մշակութային հանրույթները, որոնցում տեղի են ունենում նմանատիպ գործընթացներ: Մասնավորապես, ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել ժամանակակից Մերձավոր Արևելքի քաղաքական և սոցիալ-մշակութային տեղաշարժերը դիտարկելու համար:

Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը

Ուսումնասիրության հիմնական դրույթներն ու եզրահանգումները լուսաբանվել են հեղինակի հրատարակված գիտական հոդվածներում, ներկայացվել են միջազգային գիտաժողովներում և հեղինակի վարած դասընթացների ընթացքում: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի (ՌԴ) արևելագիտության ֆակուլտետի Ասիայի և Աֆրիկայի երկրների հասարակական զարգացման տեսության ամբիոնի կողմից:

Աղբյուրների և գրականության տեսություն

Ատենախոսության թեմայի գիտական համակողմանի ուսումնասիրությունը պահանջում է իրենց ծագումով և բնույթով տարաբնույթ աղբյուրների օգտագործում: Դրանք հիմնականում ներկայացված են հետևյալ խմբերով՝ արխիվային և հրապարակված փաստաթղթեր, կուսակցական հրատարակություններ, ժամանակակիցների վկայություններ, պարբերական

[1] Бочаров В.В., Традиционализм Востока как «принудительная солидарность» (антропологический подход) // Власть и насилие в незападных обществах. Проблемы теоретического осмысления и опыт практического изучения. М.: Издательство ГБПОУ МГОК, 2016. С. 738-749

մամուլ, գեղարվեստական-փաստագրական ստեղծագործություններ, աուդիո-վիզուալ նյութեր:

Քննվող ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական դրությունը, խարիզմատիկ առաջնորդության կառուցարկման քաղաքականությունը և մեխանիզմները ներկայացնելու համար օգտագործվել են երկու տեսակի արխիվային նյութեր: Առաջին խումբը պետական արխիվային հաստատություններում պահվող նյութերն են: Մասնավորապես, ատենախոսը օգտվել է Թուրքիայի վարչապետին կից գործող հանրապետական արխիվից և Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի արխիվից[2]: Այս արխիվներում ատենախոսության համար օգտակար են եղել Ինոնյուի նախագահության շրջանին վերաբերող իրավական փաստաթղթերը, քաղաքական գործչի շուրջ կառուցարկվող պաշտամունքը լուսաբանող օրենքները, որոշումները, օրինագծերի քննարկումները: Երկրորդ խմբի մեջ են մտնում ուսումնասիրվող ժամանակաշրջանի որոշ հայտնի գործիչների անձնական արխիվները: Առաջնային կարևորություն է ներկայացնում Ի. Ինոնյուի արխիվը, որտեղ պահվում են թե՛ տեքստային, թե՛ վիզուալ նյութեր, որոնք լուսաբանում են Ինոնյու քաղաքական, դիվանագիտական և ռազմական գործչի կյանքի ու գործունեության գրեթե բոլոր դրվագները:[3] Ուսումնասիրության համար դիտարկվել է նաև թուրք հասարակական գործիչ և գրող Թ. Թորոսի անձնական արխիվը:[4] Արխիվում Թ. Թորոսը հավաքել է Ինոնյուի նախագահության շրջանին վերաբերող ամենատարբեր բնույթի փաստաթղթեր, ինչպես նաև մամուլի հրապարակումներ, որոնք անդրադառնում են Ինոնյուի խարիզմայի կառուցարկմանը: Բացի դրանից օգտագործվել են նաև գերմանացի քանդակագործ Ռ. Բելլինգի արխիվում պահվող արժեքավոր լուսանկարները և վկայությունները, որոնց միջոցով հնարավոր է ցուցադրել Ինոնյուի մասնակցությունը սեփական խարիզմատիկ կերպարների ստեղծման գործընթացին:[5]

Հաշվի առնելով Հանրապետական-ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) խաղացած դերը Թուրքիայի Հանրապետության կյանքում՝ որպես աղբյուր օգտագործվել են կուսակցական տարաբնույթ փաստաթղթեր և նյութեր: Հատկապես արժեքավոր են կուսակցական ժողովների քննարկումների սղագրությունները, քարոզչական գրականությունը, ինչպես նաև կուսակցական գործիչների ելույթներն ու զեկույցները:[6]

[2] Cumhuriyet Dönemi Fonları, T.C. Başbakanlık Devlet Arşivleri. Genel Müdürlüğü; TBMM Tutanakları, Kütüphaneler ve Arşiv Hizmetleri Başkanlığı

[3] İsmet İnönü Vakfı, www.ismetinonu.org.tr

[4] Taha Toros Repository, İstanbul Şehir Üniversitesi.

[5] Rudolf Belling Archiv, www.rudolfbelling.com

[6] Cümhuriyet Halk Partisi Şeref Kitabı, İstanbul, Cumhuriyet Matbaası, 1938; Cümhuriyet Halk Partisi On Beşinci Yıl Kitabı, İstanbul, Cumhuriyet Matbaası, 1938; Atatürk'ün söylev ve demeçleri. I-III. Ankara, Türk Tarih Kurumu Basımevi, 198; Kop K.K., Millî Şef'in Söylev, Demeç ve Mesajları, Ankara, Akay Kitabevi, 1945 և այլն:

Թուրքիայի սոցիալ-մշակութային իրադրությունը համակողմանի ներկայացնելը հնարավոր է դառնում միայն ժամանակակիցների ու իրադարձությունների անմիջական մասնակիցների հուշերի, վկայությունների և գեղարվեստական-փաստագրական աշխատանքների շնորհիվ: Թուրք և արտասահմանցի ականատեսների վկայությունները ծառայում են որպես հետազոտական արժեքավոր աղբյուրներ, քանի որ հնարավորություն են ընձեռում տեղեկություններ ստանալ պատմական գործընթացների այնպիսի մանրամասների մասին, որոնք, իրենց բնույթի պատճառով, հաճախ տեղ չեն գտնում դասական պատմագրության մեջ: Անհրաժեշտ է առանձնահատուկ կերպով նշել, որ վերոնշյալ գործերը օգտագործվում են ոչ միայն որպես պատմական ճշմարտության աղբյուրներ, այլև, առաջին հերթին, որպես պատմական այս կամ այն իրադարձության վերաբերյալ ժամանակակիցների պատկերացումների և ընկալումների ներկայացման աղբյուր: Վերջին հանգամանքը ավելի է մեծացնում այդ աշխատանքների արժեքը՝ հաշվի առնելով ատենախոսության մեջ առաջադրված հետազոտական խնդիրները: Մասնավորապես օգտագործվել են հայտնի թուրք քաղաքական և հասարակական գործիչների՝ Ֆ. Չաքմաքի, Ֆ.Ռ. Աթայի, Հ. Դերինի, Ն. Նադիի, Յ. Նադիի, Մ. Թոքերի, Ն. Բերքեսի և այլոց հուշերը:[7] Նշվածներից հատկապես կարևոր են հայտնի լրագրող, Ինոնյուի նախագահության օրոք «Ջումհուրիյեթ» թերթի խմբագիր Ն. Նադիի հուշերը, ով մանրամասն շարադրել է հիշյալ ժամանակաշրջանի և դրան նախորդող փուլի սոցիալ-մշակութային կյանքը, քաղաքական տրամադրությունները և իշխանություն-հասարակություն կապը:

Իսմեթ Ինոնյուն ողջ կյանքի ընթացքում վարել է օրագիր, որտեղ արձանագրել է իր անձնական և հասարակական կյանքում տեղի ունեցող կարևորագույն իրադարձությունները: Այդ օրագրերը հրատարակվել են երկհատորյակի տեսքով:[8] Բացի դրանից, Ինոնյուն իր կյանքի վերջում թողել է հիշողություններ, որոնցում նա անդրադառնում է իր գործունեության տարբեր դրվագներին:[9] Հաշվի առնելով այս երկու աղբյուրների սուբյեկտիվ բնույթը՝ անձնական այս վկայությունները դիտարկվում են բացառապես որպես պատմական իրողությունների վերաբերյալ մեկ անձի ընկալումներ, այլ ոչ թե որպես պատմական ճշմարտության բացահայտման աղբյուր:

---

[7] Fevzi Çakmak'ın Hatıraları // Hürriyet, 11.05.1975; Atay F.R., Moskova-Roma, İstanbul, Muallim Ahmet Halit kitaphanesi, 1932; Derin H., Çankaya Özel Kalemini Anımsarken (1933-1951), İstanbul, Tarih Vakfı Yurt Yayınları, 1995; Nadi N., Perde Aralığından, İstanbul, Cumhuriyet, 1965; Nadi Y., Ankara'nın ilk günleri, İstanbul, Sel Yayınları, 1955; Toker M., Tek Partiden Çok Partiye, İstanbul, Bilgi Yayınevi, 1990; Berkes N., Unutulan Yıllar, İstanbul, İletişim Yayınları, 2014

[8] İnönü İ., Defterler. 2 Cilt. Hazırlayan Ahmet Demirel. İstanbul, Yapı Kredi Yayınları, 2001

[9] İnönü İ., Hatıralar. Hazırlayan Sabahattin Selek, İstanbul, Bilgi Yayınevi, 2006

Ինոնյուի նախագահության շրջանում սոցիալ-մշակութային տեղաշարժերի, հասարակական տրամադրությունների ներկայացման, խարիզմատիկ առաջնորդության կառուցարկման ձևերի և բովանդակության բացահայտման, ինչպես նաև հասարակական-քաղաքական կյանքի անցուդարձերի լուսաբանման տեսանկյունից զգալի չափով օգտագործվել են թուրքական պարբերական մամուլի հրապարակումները: Ի տարբերություն պաշտոնական փաստաթղթերի՝ մամուլը հնարավորություն է ընձեռում տեսնել, թե ինչպես էր իշխանությունների կողմից գործնականում տեղի ունենում սեփական կերպարների ստեղծումն ու տարածումը: Հետազոտության հիմքում ընկած է 1938-1950 թթ. թուրքական մամուլի կարևորագույն օրգանների մանրամասն ուսումնասիրությունը: Մասնավորապես՝ դիտարկվել են Ստամբուլում և Անկարայում լույս տեսնող «Վաթան», «Թան», «Թանին», «Վաքիթ», «Թուրան», «Աքշամ», «Ռեսմի Գազեթե», «Յեդի Գյուն», «Յենի ադամ», «Հալք», թերթերը, «Ուլքյու», «Սանաթ Դերգիսի», «Հայաթ» ամսագրերը: Հետազոտության համար առաջնային կարևորություն էին ներկայացնում «Ջումհուրիյեթ» և «Ուլուս» թերթերի հրապարակումները: Դա գլխավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ այս երկու թերթերը ուսումնասիրվող ժամանակաշրջանում ունեին ամենամեծ տպաքանակը և ամենից տարածվածն էին ողջ հանրապետության տարածքով: Այս երկու պարբերականների առաջնահերթությունը պայմանավորված է նաև վերջիններիս քաղաքական նշանակությամբ: «Ուլուս» թերթը (մինչև 1934 թ. կոչվում էր «Հաքիմիյեթ-ի Միլլիյե») ՀԺԿ կիսապաշտոնական օրգանն էր: Այն, ինչ-որ առումով, ծառայում էր որպես թուրքական սոցիալ-մշակութային և քաղաքական համակարգերի «հայելի»: «Ջումհուրիյեթ» թերթը երկար ժամանակ (մինչև Երկրորդ աշխարհամարտը) սատարում էր քեմալիստներին և ԺՀԿ-ի վարած քաղաքականությանը: Այս թերթը, ի շնորհիվ իր ղեկավարության և մեծ տպաքանակի, վայելում էր մեծ հեղինակություն և ուժեղ ազդեցություն ուներ թուրքական հասարակական-քաղաքական կյանքի վրա:

Ելնելով հետազոտական առաջադրված խնդիրներից՝ մեծ ծավալով դիտարկվել են նաև այս ժամանակահատվածից դուրս լույս տեսած պարբերական մամուլի նյութերը: Առանձին դեպքերում ներգրավվել են նաև ծաղրանկարային պարբերականներ, ազգային փոքրամասնությունների մամուլի նմուշներ, ինչպես նաև օսմանալեզու որոշ թերթեր:

Որպես աղբյուր մեծապես օգտագործվել են նաև Թուրքիայում գործող «Ժողովրդական տների» կենտրոնական օրգան հանդիսացող «Ուլքյու» ամսագրի հրապարակումները: Այս ամսագրի էջերին հրապարակվում էին գերազանցապես տեսական և ծրագրային բնույթի հոդվածներ, որոնք հիմնավորում և բացատրում էին իշխանությունների վարած քաղաքականության «ճշմարտացիությունն ու նպատակահարմարությունը»:

Խարիզմայի կառուցարկումը համապարփակ ներկայացնելու համար աղբյուր են ծառայում նաև Ինոնյուին նվիրված գեղարվեստական-փաստագրական աշխատանքները: Դրանց միջոցով կարելի է ներկայացնել

անձի պաշտամունքի կառուցարկման խորհրդանշային հիմնական պատկերներն ու հնարքները: Պետք է նշել հատկապես Յ. Զ. Օրթաչի, Յ.Ք. Քարաոսմանօղլուի աշխատանքները:[10] Անհրաժեշտ է փաստել նաև, որ նշյալ աղբյուրները թարգմանաբար ներկայացվում են առաջին անգամ:

Աղբյուրների վերջին խումբը աուդիո և վիզուալ նյութերն են, որոնք հնարավորություն են ընձեռում մանրամասն ներկայացնել Ինոնյուի խարիզմատիկ առաջնորդության կառուցարկման ձևերն ու արդյունքները: Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են երգեր, քարոզչական պաստառներ, ֆոտոկոլաժներ, քանդակներ և այլն:

Այսպիսով, ներկայացված աղբյուրների բազմազանությունը (ձևային և աշխարհագրական) հնարավորություն է ընձեռել ներկայացնել սոցիալ-մշակութային դինամիկան և Ինոնյուի խարիզմատիկ կերպարների ստեղծման էվոլյուցիան ամբողջ Թուրքիայի տարածքում, ինչպես նաև լուծել առաջադրված հետազոտական բոլոր խնդիրները:

Չնայած Ինոնյուի նախագահության օրոք Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքական կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձություններին՝ այս ժամանակաշրջանը (որը ժամանակակիցների կողմից կոչվում էր «Ազգային Շեֆի շրջան» - Milli Şef Dönemi), պատմաբանների կողմից չի արժանացել բավականաչափ ուշադրության: Ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան (թուրքական, ռուսական, արևմտյան) պատմագրության մեջ տիրապետող պատմագրական պատումը (narrative) ներկայացնում է այս շրջանը որպես Աթաթյուրքի կողմից ստեղծված քեմալական վարչակարգի պարզ և բնական շարունակություն: Նման մեկնաբանությունը պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Առաջին հերթին, այս շրջանի ոչ բավարար ուսումնասիրվածությունը կապված էր ավելի ընդհանրական՝ արդիականացող ոչ արևմտյան / արևելյան հասարակությունների պատմության ուսումնասիրության խնդիրների հետ: Քեմալիզմի և Թուրքիայի Հանրապետության առաջին փուլի ուսումնասիրություններում տիրապետող մոտեցումը թելադրված էր արդիականացված և արևմտականացված Թուրքիայի մասին մետապատումով (metanarrative): Ռադիկալ արդիականացման գործընթացը, որ տեղի էր ունենում Թուրքիայում քեմալական վարչակարգի իշխանության օրոք (1923-1950 թթ.), մեծ հետաքրքրություն էր առաջացրել արևմուտքում, ինչը հանգեցրել էր մեծ թվով գիտական և հրապարակախոսական աշխատանքների ստեղծմանը: Դրանցում օտարերկրյա դիտորդները գերազանցապես հիանում էին արդիականացման արդյունքներով և արձանագրում «Նոր Թուրքիայի» ստեղծումը: Ընդ որում, ինչպես ցույց է տվել հոլանդացի թուրքագետ Է. Յ.

[10] Ortaç Y.Z., İnönü: http://www.halilibrahimtunali.net/index.php/1945-8-ocak-13-ocak; Karaosmanoğlu Y.K., Politikada 45 yıl, İstanbul, İletişim Yayınları, 1984

Զյուրխերը, բոլոր այս աշխատանքները ունեին երեք ակնհայտ թերություն:[11] Առաջին՝ դրանցում հետազոտության կենտրոնում արդիականացման գործընթացի ներկայացումն էր, ոչ թե այդ արդիականացման բուն արդյունքները: Երկրորդ՝ Մ. Քեմալ Աթաթյուրքի կերպարի հատուկ կարևորության պատճառով նրա մահվանը հաջորդող փուլը (1938թ. անդին) մանրամասն չէր ուսումնասիրվում: Երրորդ՝ հետազոտողների մեծ մասը իրենց եզրակացությունները անում էին՝ հիմնվելով Անկարայում և Ստամբուլում արած դիտարկումների վրա: Մինչդեռ Թուրքիայի բնակչության շուրջ երկու երրորդը ապրում էր գյուղական բնակավայրերում: Այդպիսով, երկրում արդիականացման գործընթացների մեծ մասը բավականաչափ ուշադրության չի արժանացել հետազոտողների կողմից: Իրենց հերթին, այս թերությունները սահմանափակում էին արդիականացման թուրքական մոդելի և ներկայիս Թուրքիայի վրա դրա ազդեցության համակողմանի ուսումնասիրության հնարավորությունները:

Բացի այդ, վերոնշյալ մոտեցումով պայմանավորված՝ Ինոնյուի նախագահության շրջանը չէր դիտարկվում որպես ինքնուրույն ժամանակամիջոց, այլ բացառապես որպես նախա-ժողովրդավարական փուլ: Հետևաբար, այս ընթացքում տեղի ունեցած երևույթներն ու իրադարձությունները բավական չափով չեն խնդրականացվում:

Ոչ պակաս կարևոր է նաև հետևյալ հանգամանքը. Ինոնյուի նախագահության շրջանը համընկավ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Այս շրջանի վերաբերյալ ուսումնասիրությունների հետազոտական շրջանակները առավելապես ընդգրկում էին Երկրորդ համաշխարհային պատերազմի վերաբերյալ թեմաները: Եւ թերևս դա էր պատճառը, որ Թուրքիայի ներքին կյանքում ընթացող գործընթացները հետազոտողների կողմից բավականաչափ ուշադրության չարժանացան:

Միևնույն ժամանակ Թուրքիայում պետությունը տարածում էր պատմության պրիմորդիալիստական ազգայնական տարբերակը, որի կենտրոնում Քեմալ Աթաթյուրքի կերպարն էր: Ինոնյուն ներկայացվում էր վերջինիս ստվերում և հաճախ էր հայտնվում հետազոտական թեմաների սահմաններից դուրս:

Հետազոտական մոդեռնիստական հայեցակարգերի (Է. Գելլներ, Է. Հոբսբաում, Բ. Անդերսոն) և պատմագրության նոր մոտեցումների և մեթոդների տարածմանը զուգընթաց փոխվեց նաև Թուրքիայի պատմության ուսումնասիրությամբ զբաղվողների հետազոտական թիրախը: Նրանք շարունակում էին հետաքրքրվել քեմալական արդիականացման հարցերով, սակայն հետազոտության ուշադրության կենտրոնում էին հայտնվում ոչ թե կենտրոնական իշխանությունն ու իր բարեփոխումները, այլ այնպիսի

[11] Zürcher E.J., The limits of modernization in Kemalist Turkey 1923-1945. P. 7. Academia.edu. https://www.academia.edu/5726056/The_limits_of_modernization_in_Kemalist_Turkey_1923-1945

խնդիրներ, որոնց մինչ այդ կարևորություն չէր տրվում պատմաբանների կողմից: Վերջին երկու տասնամյակում թուրք և արևմտյան հետազոտողները ստեղծել են աշխատանքներ, որոնցում քննվում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են քեմալական իշխանության կառուցվածքն ու գործունեության մեխանիզմները, ազգակերտման գործընթացը, էթնիկական քաղաքականությունը Թուրքիայի Հանրապետությունում, հասարակություն-պետություն կապը, Թուրքիայի տնտեսական և սոցիալ-մշակութային առօրյան և այլն:

Նշված պատմագրական ալիքի վրա վերանայվեց նաև Ինոնյուի դերը Թուրքիայի Հանրապետության կյանքում: Ստեղծվեցին հետազոտական աշխատանքներ, որոնք առնչվում էին Ինոնյուի գործունեության տարբեր հանգամանքներին: Դրանք բոլորը հպանցիկ անդրադառնում էին Ինոնյուի ավտորիտար իշխանության և անձի պաշտամունքի ձևավորման խնդիրներին, սակայն դրանցից ոչ մեկը չէր դիտարկում այդ երևույթների առաջացման պատճառները՝ թուրքական հասարակության սոցիալ-մշակութային դինամիկայի տեսանկյունից: Հաճախ ավտորիտար իշխանական համակարգը և անձի պաշտամունքը մեկնաբանվում էին որպես քեմալիստների համար անխուսափելի գործիք՝ քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգերի արագ բարեփոխման համար, ինչպես նաև որպես քեմալիստների վրա Եվրոպայում տարածված ամբողջատիրական (տոտալիտար) վարչակարգերի ուղիղ ազդեցության արդյունք:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ատենախոսության թեմայով համապարփակ աշխատանքները բացակայում են, ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են հայ, ռուս, թուրք և արևմտյան հետազոտողների այն աշխատանքները, որոնցում անդրադարձ կա Ինոնյուի նախագահության շրջանում սոցիալ-մշակութային դինամիկայի տարբեր հանգամանքներին:

Հետազոտության համար մեծ կարևորություն ունեին այն ուսումնասիրությունները, որոնք ամբողջությամբ նվիրված էին Ինոնյուի նախագահության պատմությանը: Առաջին հերթին պետք է նշել թուրք պատմաբան Ջ. Քոչաքի «Թուրքիայում Ազգային Շեֆի շրջանը» երկհատորյակը, որում հեղինակը մանրամասն շարադրել է Ինոնյուի նախագահության տարիների պատմությունը՝ հիմնվելով արխիվային փաստաթղթերի, պատմական վկայությունների և այլ աղբյուրների վրա:[12] Սակայն այս մեծածավալ աշխատանքի հեղինակը իր ուշադրությունը սևեռում է գերազանցապես քաղաքական վերնախավի միջև պայքարին և պատերազմի տարիներին թուրքական արտաքին քաղաքականությանը: Այն որևէ կերպ չի անդրադառնում թուրքական հասարակության ուսումնասիրությանն ու իշխանություն-հասարակություն կապին: Նույն հեղինակի գրչին են

[12] Koçak C., Türkiye'de Milli Şef Dönemi (1938-1945). 2 Cilt, İstanbul: İletişim Yayınları, 2010-2017;

պատկանում այլ գրքեր և հոդվածներ, որոնք անդրադառնում են Ինոնյուի կառավարման ժամանակաշրջանին և ատենախոսության համար կարևոր տեղեկություններ են պարունակում:[13]

Ինոնյուի երկարատև քաղաքական գործունեությանն է նվիրված թուրք քաղաքական գործիչ և պատմաբան Շ. Ս. Այդեմիրի «Երկրորդ մարդը» եռահատոր աշխատանքը: Այն Ինոնյուի մասին մինչև օրս ստեղծված կենսագրական ամենամանրամասն աշխատությունն է, որում ներկայացվում է Ինոնյուի գործունեության սկզբից մինչև 1964թ. ընկնող ժամանակահատվածի բոլոր կարևոր իրադարձությունների պատմությունը: Այդեմիրի աշխատանքում ակնհայտ զգացվում են հեղինակի կողմից քեմալականների հերոսացման մղումներ, ինչը բացասական է անդրադարձել Ինոնյուի կենսագրության օբյեկտիվ ներկայացման վրա:

Ինոնյուի նախագահության շրջանի հիմնական իրադարձություններին են նվիրված հետազոտողներ Օ. Աքանդերեի, Ս. Քոջաբաշի, Ջ. Վանդերլիպպեի, Մ. Ալքանի և այլոց աշխատանքները:[14] Մեզ հայտնի է միայն մեկ ռուսալեզու աշխատանք, որն ամբողջությամբ նվիրված է Ինոնյուի նախագահության շրջանի Թուրքիային: Դա բաշկիր հետազոտող Բ.Դ. Նուրիևի գիրքն է, որում հեղինակը ուսումնասիրում է Ինոնյուի օրոք Թուրքիայում մշակութային քաղաքականությունը:[15] Ինոնյուի մանրամասն և համակողմանի կենսագրություն կազմելու փորձ է կատարել հետազոտող Մ. Հեփերը, ով ձգտել է վերստեղծել թուրք գործչի հոգեբանական կերպարը և վերաարժևորել նրա դերը Թուրքիայի պատմության մեջ: Չնայած սահմանված նպատակին՝ Հեփերը ամբողջ աշխատանքի ընթացքում փառաբանում և արդարացնում է Ինոնյուին՝ գրեթե չցուցաբերելով քննական մոտեցում նրա կերպարի հանդեպ:[16]

Ինոնյուի նախագահության շրջանը ավելի լայն պատմական համատեքստում դիտարկելու համար հատկապես օգտակար են եղել հայ թուրքագետներ Ռ. Սաֆրաստյանի, Վ. Տեր-Մաթևոսյանի, Ս. Բաղդասարյանի, Ք. Մելքոնյանի, Ա. Հովհաննիսյանի, Ռ. Մելքոնյանի, Թ. Աղամալյանի

[13] Koçak C. Geçmişiniz İtinayla Temizlenir. İstanbul, İletişim Yayınları, 2015; Նույնի՝ Tek Parti. Cumhuriyet ve şefler. İstanbul, Timaş Yayınları, 2016

[14] Akandere O., Milli Şef Dönemi. Çok Partili Hayata Geçişte Rol Oynayan İç ve Dış Tesirler, İstanbul, İz Yayıncılık, 1998; Kocabaş S., T.C. Devleti Tarihi 4, İnönü dönemi. Milli Şef Yönetimi - Demokrasiye Geçiş 1938-1950, Istanbul, Bayrak Matbaacılık, 2009; VanderLippe J.M., The Politics of Turkish Democracy: İsmet İnönü and the Formation of the Multi-Party System, 1938-1950, Albany, State University of New York Press, 2005; Alkan M. Ö., Milli Şef Döneminde Siyasal Propaganda. "Başbuğumuz, babamız İnönü" // Toplumsal Tarih, no.120, 2003, S. 102-103; Նույնի՝ "Milli Şef'li Tek-Parti Döneminde Seçimler (1939 ve 1943 Seçimleri) / Prof. Dr. Bülent Tanör Armağanı (Haz: Mehmet Ö. Alkan), İstanbul, Oğlak Yayınları, 2006

[15] Нуриев Б.Д., Культура Турции 1938-1950гг. (философско-культурологический анализ). М.: Спутник +, 2010

[16] Heper M., İsmet İnönü. The Making of a Turkish Statesman. Leiden; Boston; Köln, Brill, 1998

աշխատությունները:[17] Առանձին հիշատակություն է արժանի նաև ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանի և մի խումբ թուրքագետների հեղինակած «Թուրքիայի Հանրապետության պատմություն» կոլեկտիվ մենագրությունը:[18]

Ատենախոսության մեջ օգտագործվել են Թուրքիայի Հանրապետության վաղ փուլին նվիրված Ք. Քարփաթի, Է. Զյուրխերի, Ֆ. Ահմադի, Ն. Կիրեևի, Վ. Դանիլովի, Դ. Երեմեևի, Ա. Կոլեսնիկովի, Թ. Թունայայի, Հ. Ույարի, Օ. Ունալի, Զ. Յեթքինի աշխատանքները,[19] ինչպես նաև Թուրքիայի պատմությանը նվիրված կոլեկտիվ մենագրությունները:[20]

Թուրքական հասարակության արդիականացման և սոցիալ-մշակութային դինամիկայի խնդիրները ուսումնասիրվում են Մ. Միքերի, Բ. Էսենի, Շ. Հանիօղլուի, Է. Զյուրխերի, Թ. Աթաբաքիի, Հ. Յըլմազի ստեղծագործություններում:[21] Ատենախոսության համար հատկապես

[17] Сафрастян Р., Доктрина османизма в политической жизни Османской империи (50-70 гг. XIX в.). Ереван: АН Арм. ССР, 1985; Ter-Matevosyan V., Turkish Experience with Totalitarianism and Fascism: Tracing the Intellectual Origins // Iran and the Caucasus, 2015, V. 19, no. 4, P. 387-401; Նույնի՝ Republican Origins of Kemalism: The Early Phase of Evolution // International Review of Turkish Studies. 2011. v. 1/4, P. 44-61; Բաղդասարյան Ս., Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ., Երևան, Զանգակ – 97, 2001; Մելքոնյան Ք., ԽՍՀՄ - Թուրքիա հարաբերությունները. Հայկական հարցը, սեւծովյան նեղուցների խնդիրը եւ դաշնակից պետությունները (1945 - 1947 թթ .), Երեւան, Հեղ. հրատ., 2013; Հովհաննիսյան Ա., Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում և քեմալական Թուրքիայում, Երևան, Գիտություն, 2016; Մելքոնյան, Ռ., «Էթնիկ զորակոչ» Թուրքիայի Հանրապետությունում (1941-1942 թթ.). Լրաբեր Հասարակական Գիտությունների, 2012, № 2-3, էջ 42-50; Նույնի՝ Թուրքիայի Հանրապետության խորհրդարանի հայազգի պատգամավորները (1935-1960թթ.) // Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2012, հ. 7, էջ 166-186; Աղամալյան Թ., Իսմեթ Ինյոնյուն եւ Հայկական հարցի քննարկումը Լոզանի վեհաժողովում // Մերձավոր Արեւելք, Երեւան, 2011,VII, էջ 39-45:

[18] Սաֆրաստյան Ռ. և ուրիշներ, Թուրքիայի Հանրապետության պատմություն, բուհական դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014

[19] Karpat K.H., Türk Demokrasi Tarihi, İstanbul, Timaş Yayınları, 2016; Zürcher E.J., Turkey. A Modern History, London, New York, I.B. Tauris, 2004; Ahmad F., The Making of Modern Turkey. London, Routledge, 1993; Киреев, Н.Г., История Турции. XX век, М.: Крафт + ИВ РАН, 2007; Данилов, В.И., Турция 20–30-х годов: путь к демократии // Восток. № 2. М., 1997. С. 63-75; Еремеев, Д.Е., На стыке Европы и Азии: Очерки о Турции и турках, М.: Наука, 1978; Колесников А.А., Народные дома в общественно-политической и культурной жизни Турецкой Республики. М.: Наука, 1984; Tunaya T.Z., Türkiye'de Siyasi Partiler. Cilt 1. İkinci Meşrutiyet Dönemi 1908-1918. İstanbul, İletişim, 1998; Ünal O., Türkiye'de Demokrasinin Doğuşu Tek Parti Yönetiminden Çok Partili Rejime Geçiş Süreci, Istanbul, Milliyet Yayınları, 1994; Uyar H., Tek Parti Dönemi ve Cumhuriyet Halk Partisi, İstanbul, Boyut Yayın Grubu, 2012; Yetkin Ç., Türkiyede Tek Parti Yönetimi 1930-1945, İstanbul, Altın Kitaplar, 1983

[20] Гасратян М.А., Орешкова С.Ф., Петросян Ю.А., Очерки истории Турции, М.: Наука, 1983;

[21] Meeker M., A Nation of Empire. The Ottoman Legacy of Turkish Modernity. Berkeley, University of California Press, 2002; Esen B., Nation-Building, Party-Strength, and Regime Consolidation: Kemalism in Comparative Perspective // Turkish Studies, Dec. 2014, Vol. 15 Issue

արժեքավոր են թուրքագետ Է. Զյուրխերի տարբեր տարիների մենագրություններն ու հոդվածները, որոնցում հեղինակը դիտարկում է Թուրքիայի արդիականացման հիմնական ուղենիշները, Աթաթյուրքի անձի պաշտամունքի առաջացումը, Թուրքիայի վրա Օսմանյան կայսրության ժառանգության ազդեցությունը:[22]

Ինոնյուի խարիզմատիկ առաջնորդության կառուցարկմանն ու մեխանիզմներին հակիրճ իրենց հոդվածներում անդրադարձել են Գ. Ինանչը, Ա. Քաբաջալին:[23] Թուրքիայում անձի քաղաքական պաշտամունքի թեմային են առնչվում հետազոտողներ Ա. Թեքիների, Հ. Յիղիթի, Է. Օզյուրեքի, Ու. Դեննիի հոդվածներն ու մենագրությունները, որոնցում ներկայացված են թուրքական քաղաքական մշակույթի տարբեր դրվագները:[24]

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք բաժանվում են 13 ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործած աղբյուրների եւ գրականության ցանկից:

Ներածությունում ներկայացված են թեմայի արդիականությունը, նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, հետազոտության ժամանակագրական սահմանները, տեսական-մեթոդաբանական հենքը, կիրառական նշանակությունը, ուսումնասիրության խնդիրների վերաբերյալ աղբյուրների եւ գրականության տեսությունը:

Առաջին գլուխը վերնագրված է ***«ԵՐԿՐՈՐԴ ՄԱՐԴՈՒՑ» ՄԻՆՉԵՎ «ԱԶԳԱՅԻՆ ՇԵՖ». ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ Ի. ԻՆՈՒՆՅՈՒԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ»:*** Այն բաղկացած է չորս ենթագլուխներից:

4, P. 600-620.; Hanioğlu Ş., Atatürk. An Intellectual Biography, New Jersey, Princeton University Press, 2017; Zürcher E.J., The Ottoman Legacy of the Kemalist Republic, / Atabaki T. (ed.), The State and the Subaltern. Modernization, Society and the State in Turkey and Iran, London, I.B. Tauris, 2007; Men of Order: Authoritarian Modernization under Atatürk and Reza Shah, Ed. Touraj Atabaki and Erik J. Zürcher. London, I. B. Tauris, 2004; Yılmaz H., Becoming Turkish: Nationalist Reforms and Cultural Negotiations in Early Republican Turkey, 1923-1945, Syracuse, Syracuse University Press, 2013

[22] Zürcher E. J., In the name of the father, the teacher and the hero: the Atatürk personality cult in Turkey, / Ibrahim V., Wunsch M., Political Leadership, Nations and Charisma, London, New York, Routledge, 2012, P. 129-142; Zürcher E.J. The limits of modernization in Kemalist Turkey 1923-1945, Academia.edu: https://www.academia.edu/5726056/The_limits_of_modernization_in_Kemalist_Turkey_1923-1945

[23] Inanç G., Yarım Asırlık Bir İmaj; Millî Şef // Toplumsal Tarih, Ağustos 1994, S. 39–41; Kabacalı A., Milli Şef Döneminin Örtülü Sansürü // Tarih ve Toplum, N 38, 1987, S. 19-21

[24] Tekiner Ü.A., Atatürk Heykelleri. Kült, Estetik, Siyaset. İstanbul, İletişim Yayınları, 2014; Yiğit H.İ., İnönü Döneminde Atatürk İmajı (1938-1950), İstanbul: Yeditepe Yayınları, 2015; Özyürek E., Nostalgia for the Modern: State Secularism and Everyday Politics in Turkey, Duke University Press, 2006; Denny W. B., Atatürk and Political Art in Turkey // Turkish Studies Association Bulletin, Vol. 6, No. 2, September, 1982, P. 17-20

Առաջին գլխի առաջին ենթագլուխը վերնագրված է ***«Ի. Ինոնյուն որպես ռազմական, դիվանագիտական և քաղաքական գործիչ»:*** Այս ենթագլխում ներկայացվում է Իսմեթ Ինոնյուի համառոտ կենսագրությունը, ռազմական և քաղաքական բեմելը: Համակողմանի ուսումնասիրվել են նաև Ինոնյուի հեղինակության կայացման վրա ազդող հիմնական գործոնները: Ուսումնասիրվում են Ինոնյուի ձեռք բերած՝ «Երկրորդ մարդու» կերպարի ակունքներն ու զարգացման պատմությունը: Ցույց է տրվում, որ այդ կերպարը մեծապես ազդել է Ինոնյուի քաղաքական հեղինակության ավելացմանը:

«Ինոնյուի ընտրվելը որպես Թուրքիայի նախագահ» վերնագրով երկրորդ ենթագլխում ներկայացված են Ինոնյուի նախագահ ընտրվելու հանգամանքները, Թուրքիայում քաղաքական հակադիր ճամբարների դասավորությունը: Ցույց է տրվում, որ Ինոնյուի ընտրվելու գործընթացի վրա վճռորոշ ազդեցություն է ունեցել Ինոնյուի՝ «Աթաթյուրքի ժառանգ» լինելու համբավը:

««Շեֆության» շրջանի սկիզբը» վերնագրով երրորդ ենթագլուխն անդրադառնում է Ինոնյուի «Ազգային Շեֆ» հռչակվելու հանգամանքներին, Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ «շեֆ» երևույթի դերին, ինչպես նաև այդ հասկացության գաղափարական և կիրառական նշանակությանը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում: Ցույց է տրվել, որ «շեֆի» հանդեպ սրբազնային վերաբերմունքը պայմանավորված է նաև թուրք հասարակության մեջ արխաիկ մտածողության տարրերի զգալի առկայությամբ:

Չորրորդ ենթագլուխը, որը վերնագրված է ***««Ազգային շեֆի» Թուրքիան»***, ներկայացնում է Ինոնյուի նախագահության օրոք երկրում տեղի ունեցած հիմնական իրադարձությունները, ավտորիտար և ամբողջատիրական միտումների խորացման պատճառները: Անդրադարձ է կատարվում Ինոնյուի կողմից արդիականացման ձեռնարկներին: Ներկայացվում են Ինոնյուի անձի պաշտամունքի առաջին դրսևորումները, ուսումնասիրվում է հասարակություն-պետություն կապը Ինոնյուի նախագահության տարիներին:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է ***«ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԱՎՏՈՐԻՏԱՐ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԽԱՐԻԶՄԱՏԻԿ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ»:*** Այն բաղկացած է չորս ենթագլխից:

«Արդիական հանրապետության ստեղծումը» վերնագրով առաջին ենթագլխում ներկայացված է Օսմանյան կայսրության արդիականացման պատմությունը, օսմանյան ժառանգության ազդեցությունը Թուրքիայի Հանրապետության կայացման գործընթացի վրա: Ուսումնասիրվում է քեմալական իշխանությունների վարչակարգի բնույթը: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում կայսրության և հանրապետության միջև գոյություն ունեցող գաղափարական և ինստիտուցիոնալ կապին: Ներկայացված են քեմալականների կողմից արդիականացման հիմնական ծրագրերը:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը կրում է ***«Թուրքական ավտորիտար արդիականացումը»*** վերնագիրը: Այստեղ մանրամասն քննվել են արդիականացման բնույթը Թուրքիայի Հանրապետությունում, ներկայացվել են դրանում խարիզմատիկ առաջնորդի կարևորությունը, դրա ընկալման գաղափարական հիմքերը: Ցույց են տրվել արևմտյան և արևելյան արդիականությունների միջև առկա տարբերությունները: Հիմնավորվում է, որ թուրքական արդիականացումը ուներ «պաշտպանական» և «հետապնդող» բնույթ:

««Հայացք ներքևից». թուրքական հասարակության ավտորիտար արդիականացումը» վերնագիրը կրող երրորդ ենթագլխում ներկայացվում է թուրքական հասարակության արդիականացման հիմնական արդյունքը՝ թուրքական հասարակության տեսանկյունից: Փաստվում է, որ քեմալականների իրականացրած արդիականացումը գլխավորապես անդրադարձել էր քաղաքային բնակչության վրա, որի արդյունքում գոյացել էր զինվորական բյուրոկրատական նեղ խավ: Այդ խավը հանդիսանում էր քեմալական իշխանության հենասյունը: Միևնույն ժամանակ Թուրքիայի բնակչության մեծամասնությունը ապրում էր քաղաքային խոշոր կենտրոններից դուրս և արդիականացման բարեփոխումները չէին ազդել նրանց կենսակերպի վրա: Ստեղծված իրավիճակում հասարակության սոցիալական կառուցվածքը մնացել էր նույնը, սակայն ավանդական արժեքները ենթարկվում էին մշտական շեղման:

Չորրորդ ենթագլուխը վերնագրված է ***««Ավանդույթի իշխանություն» և խարիզմատիկ առաջնորդություն. ավտորիտար արդիականացման պայմաններում հասարակության համերշխումը»***: Այս ենթագլխում ներկայացված են արևելյան ավանդական հասարակության արդիականացման առանձնահատկությունները: Ցույց է տրվում, որ «ավանդույթի իշխանության» մեխանիզմների, և հատկապես խարիզմատիկ առաջնորդության կիրառման անհրաժեշտությունը բխում է արդիականացման բնույթից: Ներկայացվում են «ավանդույթի իշխանության» մեխանիզմների կիրառության օրինակները Թուրքիայի Հանրապետությունում: Առանձնապես անդրադարձ է կատարվում խարիզմատիկ առաջնորդության կառուցարկման գործընթացին՝ Մ.Ք. Աթաթյուրքի օրինակով:

Ատենախոսության երրորդ գլուխը կրում է ***«ԽԱՐԻԶՄԱՏԻԿ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ. ԻՆՈՆՅՈՒՆ ԵՎ «ԱԶԳԱՅԻՆ ՇԵՖԻ» ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ»*** վերնագիրը:

«Պաշտամունքի արտադրությունը. ներածություն» վերնագրով առաջին ենթագլխում ներկայացված է խարիզմայի նշանակությունը հասարակություն-իշխանություն հաղորդակցության ապահովման համար: Լուսաբանվում են խարիզմատիկ առաջնորդության՝ քաղաքական գործչի անձի պաշտամունքի վերաճելու պայմաններն ու ընթացքը: Տրվում են անձի պաշտամունքի տիպաբանական առանձնահատկությունները: Ներկայացվում

են Թուրքիայում անձի պաշտամունքը տարածող և սպասարկող կառույցներն ու դրանց դերը:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը վերնագրված է ***«Պաշտամունքի մշակութային արտադրանքը»:*** Այս ենթագլխում մանրամասն ուսումնասիրված են պաշտամունքի տարածման հիմնական ուղիները (լրատվական հարթակ և հանրային-տարածական հարթակներ), որոնք գտնվում էին իշխանության վերահսկողության ներքո: Տիպաբանորեն ներկայացվում են պաշտամունքի հիմնական դրսևորումները՝ վերբալ, պատկերային-դեկորատիվ և խաղարկային: Մանրամասն անդրադարձ է կատարվում Ինոնյուի իշխանության օրոք ԶԼՄ-ների վիճակին և դրա միջոցով անձի պաշտամունքի տարածմանն ու կառուցարկմանը: Ինոնյուի իշխանության պատկերների տարածման և իշխանական հաղորդակցության համար կարևոր էին պաշտամունքի վերբալ դրսևորումները, որոնցում նշանակալի տեղ էին զբաղեցնում բյուրոկրատական թղթաբանությունը, գեղարվեստական գրականությունը, Ինոնյուի ճառերը և այլն: Ցույց է տրվում, որ ավանդական հասարակության համար վիզուալ պատկերները (ֆոտո, խորհրդանիշներ, քանդակագործություն, ճարտարապետություն, պաստառ, թատրոն և այլն) մեծ կարևորություն ունեին՝ պայմանավորված թուրք բնակչության գրագիտության աստիճանով: Պաշտամունքի կառուցարկման խաղարկային ձևերը ներկայացվում են որպես «պետական քարոզչական բեմականացումներ», որոնք ենթադրում էին իշխանության օբյեկտ հանդիսացող հասարակության մասնակցություն իշխանական հաղորդակցությանը՝ այդպիսով լեգիտիմացնելով խարիզմատիկ առաջնորդության կառուցարկման գործընթացը (այդպիսիք էին, օրինակ, պետական և ազգային տոնակատարությունները): Ժամանակային կտրվածքով ներկայացվում է Լոզանի օրվա տոնակատարությունների միջոցով Ինոնյուի անձի պաշտամունքի կառուցարկման գործընթացը: Այս ենթագլուխն ավարտվում է Ինոնյուի պաշտամունքի կառուցարկման այն դրսևորումների դիտարկմամբ, որոնք պայմանավորված էին թուրք հասարակության արխաիկ մտածողությամբ:

«Ինոնյուի հիմնական կերպարները» վերնագիրը կրող երրորդ ենթագլուխը համառոտ ամփոփում է Ինոնյուի այն հիմնական կերպարները, որոնք առկա էին նրա անձի պաշտամունքում: Դրանք են. Աթաթյուրքի մերձավոր ընկեր և ժառանգ, Լոզանի և խաղաղության հերոս, հերոս-զորահրամանատար, «ժողովրդի մարդ», արդիականացման խորհրդանիշ:

Երրորդ գլխի չորրորդ ենթագլուխը կրում է ***««Ազգային շեֆի» շրջանում Աթաթյուրքի կերպարն ու պաշտամունքը»*** վերնագիրը: Այս ենթագլխում ուսումնասիրվում է Աթաթյուրքի հետմահու պաշտամունքի օգտագործումը Ինոնյուի իշխանության օրոք: Ներկայացվում են Աթաթյուրքի պաշտամունքը սահմանափակելու և վերահսկողության տակ պահելու դրսևորումները: Համեմատություն է անցկացվում Աթաթյուրք-Ինոնյու

պաշտամունքների և սոցիալիստական՝ Լենին-Ստալին պաշտամունքների միջև:

Երրորդ գլխի վերջին՝ հինգերորդ ենթագլխում, որը վերնագրված է ***«Ինոնյուի կերպարի կերպարանափոխությունը 1945թ. հետո»***, ուսումնասիրված են Ինոնյուի պաշտամունքի դրսևորումները 1945թ. սկսված հարաբերական ժողովրդավարացման պայմաններում: Ցույց է տրվում Ինոնյուի խարիզմայի կառուցարկման և պաշտամունքի շարունակականությունը մինչև վերջինիս նախագահության ավարտը: Փաստարկվում է Ինոնյուի անմիջական մասնակցությունը իր պաշտամունքի կառուցարկման գործընթացին: Ներկայացված են Ինոնյուի պաշտամունքի կերպարանափոխության դրսևորումները որպես ընդդիմության առաջնորդ:

Եզրակացություն բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական եզրահանգումները.

- Թուրքիայի Հանրապետության քաղաքական և հասարակական համակարգը ուսումնասիրելու համար Թուրքիայի սոցիալ-մշակութային դինամիկայի հետազոտությունը ունի առանցքային կարևորություն: Հասարակության սոցիալ-մշակութային դինամիկան զգալի չափով որոշում է պետության ներքին և արտաքին քաղաքական զարգացումների հարացույցերը: Թուրքիայի պարագայում սոցիալ-մշակութային դինամիկան գերազանցապես պայմանավորված է ավանդական հասարակության արդիականացման նախագծերով:
- Թուրքիայի Հանրապետության արդիականացման նախագիծը սկսվել էր դեռևս Օսմանյան կայսրությունում: Թուրքական ավանդական հասարակության արդիականացումը պայմանավորված էր նոր օսմանների և երիտթուրքերի արդիականացման գաղափարների բնույթով: Քեմալականների մեծ մասը հանդիսանում էին նախկին երիտթուրք գործիչներ, այդ պատճառով քեմալական արդիականացումը կարելի է համարել նախորդ՝ օսմանյան բարեփոխումների փորձի շարունակություն:
- Թե՛ օսմանյան արդիականացումը, թե՛ քեմալականների արդիականացումը չէին ձգտում իրական սոցիալական և տնտեսական բարեփոխումների: Քանի որ նրանց արդիականացման գաղափարը կրում էր «պաշտպանական», «հետապնդող» բնույթ, բարեփոխիչները լուրջ քայլեր չէին ձեռնարկում ավանդական հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխության համար:
- Արդիականացման բնույթը պայմանավորեց նոր ձևավորված Թուրքիայի Հանրապետության քաղաքական մշակույթը: Քեմալական արդիականացումը ավտորիտար էր, ինչը պայմանավորված էր երկու հանգամանքով: Առաջին. քեմալականները այն եվրոպական գաղափարների կրողներն էին, որոնք արդիականացումը հնարավոր էին համարում միայն ուժեղ առաջնորդի և ուժեղ պետության միջոցով: Երկրորդ. արդիականացումը աստիճանաբար բերում էր թուրքական ավանդական հասարակության քայքայման, որը վտանգում էր պետության գոյությունը: Դա կանխելու համար

քեմալական քաղաքական վերնախավը կիրառում էր հասարակության ստիպողական համերաշխման մեխանիզմները, որոնք իրենց հերթին ամրապնդում էին պետության ավտորիտար բնույթն ու ավտորիտար արդիականացումն ընդհանրապես:

- Հասարակության ստիպողական համերաշխման առանցքային մեխանիզմը Թուրքիայի ղեկավարի խարիզմատիկ առաջնորդությունն էր, որի հիման վրա և որի շուրջ կառուցված էր երկրի ողջ քաղաքական և սոցիալական համակարգը: Աթաթյուրքից հետո և Ի. Ինոյուի նախագահության օրոք խարիզմատիկ առաջնորդությունն էր հանդիսանում քեմալական քաղաքական համակարգի պահպանման և զարգացմանը համար ամենաազդեցիկ գործոնը:
- Իսմեթ Ինոնյուի ընտրությունը երկրի նախագահի պաշտոնում պայմանավորված էր նաև Ինոնյուի ունեցած «Երկրորդ մարդու» խարիզմատիկ հեղինակությամբ, որը կառուցարկվել էր հանրապետության առաջին մեկ ու կես տասնամյակում:
- Իսմեթ Ինոնյուն կարևորում էր խարիզմատիկ առաջնորդության նշանակությունը քաղաքական համակարգի պահպանման և զարգացման համար, ուստի իր նախագահության առաջին օրվանից սկսած ձեռնամուխ եղավ սեփական անձի պաշտամունքի կառուցարկմանը: Այդ ուղղությամբ առաջին պաշտոնական քայլը Ինոնյուի հռչակումն էր «Ազգային շեֆ»: Հետագայում, նախագահության տարիներին Ինոնյուն շարունակում էր իր անձի շուրջ խարիզմայի կառուցարկումը՝ հասցնելով այն մինչև քաղաքական պաշտամունքի ձևավորման:
- Ինոնյուի պաշտամունքի կառուցարկման համար կիրառվում էին ինչպես նոր խորհրդանշական կերպարներ և գործիքներ, այնպես էլ ավանդական հասարակությանը ծանոթ խորհրդանիշեր, որոնք ուղղված էին տարբեր լսարանների:
- Ինոնյուի խարիզմատիկ կերպարի ստեղծմանը մասնակցում էին հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչները, այդ թվում ինքը նախագահ Ինոնյուն, ով երբեմն անձամբ էր վերահսկում և ուղղորդում այդ գործընթացը:
- Խարիզմատիկ առաջնորդության կառուցարկման մեխանիզմը մշտապես եղել է թուրքական քաղաքական գործիչների ուշադրության կենտրոնում: Նրանցից ոմանք (օր.՝ Ա. Մենդերեսը, Ջ. Բայարը, Ջ. Գյուրսելը և այլոք) փորձում էին ստեղծել իրենց անձի պաշտամունքը: «Խարիզմատիկ առաջնորդության» գործոնը շարունակում է կարևորագույն դեր խաղալ ժամանակակից Մերձավոր Արևելքի հասարակություններում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. «Երկրորդ մարդը». անձի պաշտամունքը և միջկուսակցական պայքարը Թուրքիայում 1938-1950թթ., - Արևելագիտության հարցեր, № X, 2015, էջ 76-96:
2. Площадь Таксим и образы власти: урбанистическая реконструкция как средство и пространство коммуникации в кемалистской Турции, - *Клио*, № 4 (124) 2017, էջ 72-78:
3. На службе у шефа: роль турецкой художественной литературы в репрезентации власти в годы президентства И. Иненю (1938-1945), - *Genesis: исторические исследования*, № 4, 2017, էջ 38-55:
4. Контроль и цензура: турецкая пресса в период «Национального шефа», - Ակունք, № 1 (15), 2017, էջ 94-101:
5. Характеристика модернизации в Турции в период кемалистской власти: попытка переоценки, - *Genesis: исторические исследования*, № 6, 2017, էջ 44-55:
6. Изобретая Лозанну: праздник Мира как способ конструкции харизмы власти в традиционном обществе, - *Islamology - Journal for the Studies of Islam and Muslim Societies* (http://dx.doi.org/10.24848/islmlg.07.1.10), Том 7, № 1, 2017, էջ 219-235:

ГЕГАМЯН ВАРУЖАН ГЕГАМОВИЧ

СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНАЯ ДИНАМИКА В ТУРЦИИ В ПЕРИОД ПРЕЗИДЕНТСТВА И. ИНЕНЮ (1938-1950гг.)

Диссертация на соискание учёной степени кандидата исторических наук по специальности 07.00.02 - «Всемирная история, международные отношения».

Защита состоится 20 июля, 2017 г., в 11:00, на заседании специализированного совета 006 "Всемирная история, международные отношения", действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению социокультурной динамики в Турции в период правления президента Исмета Иненю (1938-1950гг.). В исследовании основной акцент сделан на социокультурный анализ политики, в частности конкретизацию и выявление причин возникновения феномена харизматического лидерства и культа личности в Турции в годы правления Иненю. Актуальность темы диссертации обусловлена тем, что авторитарная власть и харизматическое лидерство руководителя страны до настоящего дня являются одними из важнейших факторов историко-политического развития Турецкой Республики. Однако в историографии отсутствует комплексный историко-антропологический анализ феномена культа личности турецких политиков, что делает работу актуальной для исторической науки.

Цель нашего исследования выявить основную роль механизма харизматического лидерства как центрального фактора социокультурной динамики в модернизирующемся традиционном обществе Востока, представить способы его конструкции и репрезентации.

Главным научным заключением диссертации является тезис о том, что образование культа личности Иненю в условиях авторитарной модернизации Турции было обусловлено распадом традиционного общества и необходимостью принудительной солидаризации социума, и не было обусловлено только личностными качествами политического деятеля.

Диссертация состоит из введения, трёх глав, которые делятся на тринадцать подглав, заключения и списка использованных источников и литературы.

Во **введении** представлены актуальность темы, а также цели и задачи, научная новизна, хронологические рамки, методологическая основа и практическое значение исследования, краткий обзор источников и литературы.

Первая глава озаглавлена ***«ОТ «ВТОРОГО ЧЕЛОВЕКА» К «НАЦИОНАЛЬНОМУ ШЕФУ»: ТУРЕЦКАЯ РЕСПУБЛИКА В ПЕРИОД ПРЕЗИДЕНТСТВА И. ИНЕНЮ»*** и состоит из четырёх подглав. Первая подглава, озаглавленная ***«И. Иненю как военный, дипломатический и политический деятель»***, представляет краткую биографию Исмета Иненю, его политическую, дипломатическую и политическую деятельность. Подробно исследуется возникновение феномена «Второго человека», который в значительной мере повлиял на политический авторитет Иненю в последующем. Вторая подглава озаглавлена ***«Избрание Иненю президентом Турции»***. В ней представлены те условия и факторы, которые повлияли на избрание Иненю главой государства. В третьей подглаве, озаглавленной ***«Начало периода шефства»***, рассмотрены идеологические основы феномена «шефства» в Турции, его роль в общественно-политической жизни в контексте традиционного турецкого общества. В четвертой подглаве, которая озаглавлена ***«Турция «Национального Шефа»»***, представлены основные события, произошедшие в период президентства Иненю. Проанализированы причины тоталитарных тенденций. Приводятся примеры зарождения культа Иненю.

Вторая глава озаглавлена ***«ХАРАКТЕРИСТИКА СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНОЙ ДИНАМИКИ В УСЛОВИЯХ АВТОРИТАРНОЙ МОДЕРНИЗАЦИИ И ХАРИЗМАТИЧЕСКОЕ ЛИДЕРСТВО»*** и состоит из четырёх подглав. В первой подглаве, которая озаглавлена ***«Создание модернизированной республики»***, раскрываются основные этапы турецкого модернизационного проекта. Представлены связь и влияние османской модернизации на модернизационную политику Республиканской Турции. В подглаве ***«Турецкая авторитарная модернизация»*** выявляются различия между турецкой (восточной) и европейской (западной) модернизацией, представлен защитный и догоняющий характер турецкой модернизации. Третья подглава ***««Взгляд снизу»: авторитарная модернизация турецкого традиционного общества»*** представляет результаты турецкой модернизации. В ней показываются различия между городской и сельской модернизацией. Рассматриваются социальные связи традиционного турецкого общества в период президентства Иненю. В четвертой подглаве ***««Власть традиции» и харизматическое лидерство: солидаризация общества в условиях авторитарной модернизации»*** представлены механизмы «власти традиции» в турецком обществе, раскрыта роль симулякра харизматического лидерства. Проанализированы особенности конструкции харизматического лидерства в Турции на примере М.К. Ататюрка.

Третья глава диссертации озаглавлена ***«РЕПРЕЗЕНТАЦИЯ ХАРИЗМАТИЧЕСКОЙ ВЛАСТИ: ИНЕНЮ И КУЛЬТ ЛИЧНОСТИ «НАЦИОНАЛЬНОГО ШЕФА»»*** и состоит из пяти подглав. Первая подглава носит название ***«Производство культа. введение»***. В ней изложена роль харизматического лидерства Иненю в обеспечении властной коммуникации. Представлены условия и процесс превращения харизматического лидерства в политической культ. Показаны обслуживающие культ институты и огранизации. Во второй подглаве, которая озаглавлена ***«Культурная продукция культа»***, детально рассмотрены основные каналы и формы репрезентации власти и культа Иненю. Раскрыта роль СМИ в деле создания образов харизматической власти. Подробно проанализированы вербальные, визуально-декоративные и игровые формы конструкции власти. Для рассмотрения продолжительности культа Иненю во времени раскрывается содержание праздника Дня Лозанны. В третьей подглаве (***«Основные образы Иненю»***) представлены основные образы, в которых было представлено харизматическое лидерство Иненю.

Четвертая глава, озаглавленная ***«Образ и культ Ататюрка в период «Национального шефа»»***, показана роль посмертного культа Ататюрка в годы президентства Иненю. Последняя, пятая подглава, которая озаглавлена ***«Трансформация образа Иненю после 1945г.»*** демонстрирует продолжительность культа Иненю в условиях относительной демократии.

В ***заключении*** обобщены основные выводы, полученные в ходе подготовки диссертации.

VARUZHAN G. GEGHAMYAN

SOCIO-CULTURAL DYNAMICS IN TURKEY DURING THE PRESIDENCY OF I. INONU (1938-1950)

The defense of dissertation will take place at 11:00, on 20th of July of 2017, at the meeting of the Specialized council 006 "World History, International Relations" at the Institute of Oriental Studies of NAS RA.

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the field of "World History, International Relations" 07.00.02.

SUMMARY

The dissertation is a historical research into the role of socio-cultural dynamics in Turkey during the presidency of Ismet Inonu (1938-1950). The main focus of the dissertation is the socio-cultural analyses of the politics, particularization and identification of the reasons of the emergence of the phenomena of charismatic leadership and cult of personality in Turkey during the presidency of Inonu in particular. The actuality of the topic is due to the fact, that one of the most critical factors of Turkey's historical and political development until nowadays is the authoritarian power and charismatic leadership. Yet, in current historiography and political science the emergence of charismatic leadership and the cult of personality are often linked to personality traits and dominant ideologies of particular politicians.

The main aim of the dissertation is to study the role of the mechanism of charismatic leadership as a key factor in the socio-cultural dynamics of modernizing traditional non-western society, and to demonstrate its construction and representation.

The main scientific conclusion of the dissertation is the thesis that the formation of Inonu's cult of personality was due to the destruction of social ties and the necessity of solidarization in the society in the process of modernization and thus was not dependent on the personality traits of the politician.

The research comprises introduction, three chapters consisting of thirteen subchapters, conclusion and bibliography.

The ***introduction*** covers the actuality of the topic, also the goals and objectives, scientific novelty, chronological framework, methodological basis and practical significance of the research, summary theory of the sources and literature concerning the issue.

The first chapter is entitled ***«FROM THE «SECOND MAN» TO «NATIONAL CHIEF»: TURKISH REPUBLIC DURING THE PRESIDENCY OF I. INONU»*** and consists of four subchapters. The first subchapter is entitled ***«Inonu as military, diplomatic and political actor»***. It refers shortly to the biography of Inonu and demonstrates in details the emergence and role of the «Second man» phenomena. The second subchapter is entitled ***«The election of Inonu as a president»***. In this chapter factors and conditions that influenced Inonu's election as a president ara researched. Ideological foundations of the «Chief» phenomena in Turkey are given in the third subchapter entitled ***«The beginning of «Chief»***

era». The role of the «Chief» in the socio-political life is examined in the context of Turkish traditional society. The fourth subchapter is entitled *«Turkey of the «National Chief»»*. In this subchapter the key events of the «National Chief» period are shown. The reasons of totalitarian tendencies are researched. Examples of emergence of the political cult of Inonu are presented.

The second chapter is entitled «*THE CHARACTERISTICS OF THE SOCIO-CULTURAL DYNAMICS IN THE CONDITION OF AUTHORITARIAN MODERNIZATION AND CHARISMATIC LEADERSHIP*» and consists of four subchapters. The first subchapter is entitled *«The creation of the modernized republic»*. In this subchapter the main stages of Turkish modernization project are shown. The link between Turkish Republic and the Ottoman Empire and the influance of Ottoman legacy on Kemalist modernization are examined. The second subtitle is entitled *«Turkish authoritarian modernization»*. It analyses the differences between Turkish (non-western) and European (western) modernization, and shows the defensive and «catch-up» nature of Turkish modernization. The second subchapter is entitled *««View from above»: the authoritarian modernization of Turkish traditional society»*. In this subchapter the results of Turkish modernization during Inonu's presidency are presented. The contrast between modernization in urban and rural places are examined. The social structure of Turkish society is researched. In the last subchapter (*««Power of Tradition» and charismatic leadership: solidarization of society in the condition of traditional society»*) the mechanisms of power of tradition in Turkey are presented. The role of the simulacrum of charismatic leadership in Turkish society is examined. Specifications of the construction of charismatic leadership with the example of M. K. Ataturk are given.

The third chapter of the dissertation entitled *«THE REPRESENTATION OF THE CHARISMATIC LEADERSHIP: INONU AND THE CULT OF PERSONALITY OF THE «NATIONAL CHIEF»»* and includes five subchapters. The first subtitle is entitled *«The production of the cult: Introduction»* and it incorporates the introduction of role of Inonu's charismatic leadership in the «communication of power». The conditions and the process of transformation of the charismatic leadership into the cult of personality are given. The institutions and organizations that served and translated the cult are presented. The second subchapter is entitled *«The cultural products of the cult»*. In this subchapter the main channels and forms of the representation of the power and cult of Inonu are examined in details. The role of mass media in the construction of the Inonu's charisma is revealed. The verbal, visual-decorative and participatory forms of construction of power are thoroughly analyzed. To demonstrate the continuation of the Inonu's cult in the time frame the Lozan day celebrations are reconstructed. The third subchapter is entitled *«The main images of Inonu»*. It identifies five main faces of Inonu's charismatic leadership. The fourth subchapter is entitled *«The image and the cult of Ataturk during the period of the «National Chief»»*. It shows the role of posthumous cult of Ataturk in years of Inonu's presidency. The fifth subtitle is entitled *«The transformation of Inonu's image after 1945»*. It demonstrates the continuance of the Inonu's cult in the relatively democratic conditions.

In the conclusion the main results of the thesis are summarized.